

անարակութիւն կազմեցին, որի մէջ մի հոգի կար, և կազմեցին այն եկեղեցու հաստատուն և անդրդուելի հիմն, որի գլուխ ինքը Քրիստոսն է, և որին Տիրոջ խօսքի համաձայն՝ դրունք դժոխաց ոչ կարին յաղթահարել:

Այս կամ այն վարդապետութիւնը, որ վերաբերում է մտքի և կեանքի սկզբնական հարցերին, երբեք չի մնում առանց ազդեցութեան այն մարդկանց կեանքի վերայ, որոնք նրան իւրացրել են, և այդ ազդեցութեան բնաւորութեամբ էլ որոշւում է վարդապետութեան անարդարութիւնը և կամ ճշմարտութիւնը: Կեղծիքի վրայ հիմնուած վարդապետութիւնը նոյնպիսի կեղծ ընթացք է տալիս և մտքերին, զգացումներին և առհասարակ իւր հեռեւորներին հոգեւոր կեանքի ամեն հոսանքին, առաջնորդում է նրանց դէպի պարսաւելի և անխօսեմ՝ գործունէութիւն և միշտ մարդկային բազդաւորութեան թշնամի է հանդիսանում: Ճշմարիտ վարդապետութեան հետ անբաժան են հակադիմ հետեւարար և բարերար հետեւանքները: Եթէ այդպէս է, ուրեմն այն փոխադարձ բարերար ազդեցութիւնը, որը հետեւանք է աւետարանական վարդապետութեան կեանքի նպատակի մասին, իւր առաջին հաւատացեալ անձանց կեանքի վերաբերմամբ, հիմնաւորապէս յայտնի է կացուցանում՝ նրա ճշմարտութեան անվիճելի ապացոյցը:

Աւետարանական վարդապետութիւնը պարզ կերպով ակնյայտնի է կացուցանում կեանքի վախճանական նպատակը, և իւրաքանչիւր աւետարանին ծանօթ անձն չի կարող չիմանալ թէ ինչից է այն: Բայց իմանալ նպատակը չի նշանակում հասնել նրան: Կարելի է ճիշտ ծանօթութիւն ունենալ նպատակի մասին, բայց ընդմիջ ոչ միայն մօտենալ նրան, այլ միշտ հեռու և հեռու փախել նրանից: Կեանքի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իմանալ և այն միջոցները, որոնք տանում են դէպի նա, և անհրաժեշտ է օգտուիլ այն միջոցներէ: Աւետարանը ևս ցոյց է տալիս այդ միջոցները: Աւետարանն ուսուցանում է, որ մարդս պարտաւոր է հաւատալ և սիրել, եթէ կամենում է լուսաբանել իւր համար կեանքի նշանա-

կութիւնը և հասնել նրա վախճանական նպատակին: Աւետարանն ուսուցանում է, որ հաւատոյ և սիրոյ ճանապարհն է այն միակ ճանապարհը, որն առաջնորդում է մեզ անկեղծօրէն կցորդուիլ միասալ երկնաւոր Հօր, այն է՝ Աստուծոյ հետ:

Թարգմ. Խաչատուր ք. Փանեանց.



ՍԻՌՆԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄԸ ՀՐԷԱՆԵՐԻ ՄԷջ.

Վերջին ժամանակներս Հրէից ազգի ներքին կեանքի մէջ աչքի է ընկնում մի մեծ հասարակական շարժում, որ տարեցտարի աւելի լայն ծաւալ ընդունելով՝ համարեալ թէ ընդհանուր ազգային կերպարանք է ստացել: Իւր զարգացման սկզբնական շրջանում քիչ աչքի ընկնող այս շարժումը, որ յայտնի էր պաշտօնական անունով, սկսեց ընդհանուր ուշադրութիւն դրաւել այն ժամանակից, երբ նորա առաջնորդները տալով այդ շարժման աւելի զօրեղ հնչող «*սինաիստիկան*» անունը, սկսեցին եռանդուն կերպով արծարծել այդ գաղափարը և յայտնի դարձնել քաղաքակիրթ աշխարհին, այսպէս կոչուած, ամենամեայ «համաշխարհային սինական համաժողովների» միջոցով: Այդպիսի համաժողովներ, սկսած 1897 թ. օգոստոսից մինչև այժմ, եղել են չորս անգամ, առաջին երեքը Բագելում, իսկ վերջինը՝ Լոնդոնում: Այս համաժողովներում հաւաքուում են սինականների ներկայացուցիչները աշխարհի ամեն կողմերից: Ռուսաստանից, Աւստրիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Բալքանիան տերութիւններից եկած պատգամաւորների հետ միասին, այստեղ պատահում են պատգամաւորներ նաև Միացեալ Նահանգներից, Կանադայից, Արգենտինեան հասարակապետութիւնից և մինչև անգամ՝ Մարիից և Տրանսիլլից: Իւրաքանչիւր համաժողովում այդպիսի պատգամաւորների թիւը հասնում է մի քանի հարիւրի, իսկ կողմնակի յաճախողներին՝ մի քանի հազարի:



Համաժողովները սովորաբար տևում են 3—4 օր և տիրապետող լեզուն իբրև ամենից առաջի հասկանալի մեծամասնությունը գերմաներենն է։ Թէպէտ և ճառեր արտասանում են նաև ռուսերեն և ֆրանսերեն անգղիերեն և մինչև անգամ հին եբրայեցիներն։ Բուն հրէական լրագրներից զատ համարեալ թէ բոլոր եւրոպական և ամերիկական լրագիրները ունենում են այնտեղ իրենց ներկայացուցիչները։ Համաժողովի նիստերի աչքի ընկնող ճառերի և արած որոշումների մասին տեղեկութիւններ կարելի է գտնել եւրոպական և ռուսական բոլոր նշանաւոր թերթերում։ Առանձնապէս հրէական աշխարհում սինաական շարժումը ամենաառաջին տեղն է բռնել, դրա մասին դատողութիւններն ու վեճերն անպակաս են հրէական թերթերի և ամադիրների սինաականից։ Կազմուել է մի ամբողջ սինական գրականութիւն, որ նուիրուած է այդ շարժման էութեան բացադրութեանը, նորա խնդիրներին և նպատակներին, զեր և զէմ եղած կարծիքներին։ Մի խօսքով, եթէ հարցնելու լինիք թէ այժմ հրէութիւնը մտաւորապէս ինչո՞վ է ապրում, ինչո՞վ է նա վրդովուած և յուզուած, առանց սխալուած լինելու, կարելի է պատասխանել, «*իննա՞նք*»։ Այս հանգամանքները ինկատի առնելով կարծում ենք, հետաքրքրական կըլինի ընթերցողների համար ծանօթանալ այս շարժման էութեանը, նորա խնդիրներին և նպատակներին, նշնապէս և նորա ծագման պատմութեանն ու այն հանգամանքներին, որոնք այն լոյս աշխարհ հանեցին։ Մի այսպիսի հասարակական մեծ շարժում, որ հրէական ազգայնականութեան մէջ ընդարձակ ծաւալ է առաջել, արժանի է լուրջ ուշադրութեան ոչ միայն հասարակական—քաղաքակրթական այլ և ժողովրդական հոգեբանական տեսակետից, որը ցոյց է տալիս այն տենչերն ու յոյսերը, որոնք յուզում են այժմ ժամանակակից հրէութեանը և այն միջոցներն ու ձանադարհները, որոնցով հրէական ազգայնականութեան մեծամասնութիւնը յոյս ունի վճռելու այսպէս կոչուած «*հրէական խնդիր*»։

Սինականութեան էութիւնն է, ճիշտումն որոշ մաս հրէաների կողմից ձեռք բե-

րել մշտական հասարակական իրաւունքով պաշտպանուած բնականութեան տեղ իրենց նախնիքների պատմական երկրի մէջ՝ Պաղեստինում։ Այդ շարժումը այսպիսի խիստ որոշ ուղղութիւն առաջաւ 4—5 տարի սորանից առաջ, երբ գործի դուրս անցան երեսասարդ տաղանդաւոր հրապարակախօս և տրամաւոր դրբոր Թէոֆոր Գերցլ և յայտնի հեղինակ Մակս Նորդաւ։ 1895 թ. Գերցլ հրատարակում է մի բրոշուր «*Der Judenstaat*» վերնագրով, որ միանգամից ընդհանուր ուշադրութիւն է գրաւում։ Այս բրոշուրում հեղինակը առաջ է դալիս հրէական թաղաւորութիւն կազմելու համարձակ ծրագրով, որ պէտք է վերջ գնէ հրէական խնդրին։ Հեղինակը ցոյց է տալիս այն երկիրը, որ պէտք է ծառայէր ցնորքների իրագործմանը։ Գորա բնարութիւնը թողնում է ամբողջ ազգի ձայնից մեծամասնութեանը։ Նորա համար կարեւոր է միայն այն, որ գտնուի մի այդպիսի երկիր և ըստ կարելւոյն շուտ տեղափոխուի այդտեղ եթէ ոչ ամբողջ հրէից ազգը, գէթ առնուապէս նորա մեծ մասը։ Հեղինակը մանրամասնօրէն բացատրում է այդ զաղթականութեան ծրագիրը, ցոյց է տալիս իրագործելու միջոցները, կարծիք բայց որոշ և արտայայտիչ գծերով պատկերացնում է նոր պետութեան ապագայ հասարակական—տնտեսական և քաղաքական կազմակերպութիւնը, անտես չառնելով նաև կառավարութեան եղանակը, բանուորական օրուայ տեղութիւնը, մինչև անգամ սկստական ղեկանշանի ձևը։ Այս ուսուցիչն որ իւր միաժամ համարձակութեամբ և փանաւատիքականութեամբ յետ չէ մնում մինչև այժմ եղած մեզ յայտնի ուսուցիչներից, ջերմ համակրութիւն գտաւ այնուամենայնիւ մեր գործնական դարում աշխարհի ամենագործնական ժողովրդի կողմից։ Բանն այն է, որ Գերցլ առաջի դօրեղ և ուսուցիչական ձևով արտայայտել է այն ինչ որ վաղուց արդէն հրէից ազգի մեծամասնութեան ձգտման առարկան էր կազմում միայն առաջի սրբող և սրկաւ ուսուցիչական ձևով, որ յայտնի է պաղեստինաւորութիւն անունով։

Պաղեստինաւորութիւնը յառաջ է դալիս ու խնուհական թուականների սկզբում երբ



զորեղ հալածանք է սկսում Առաքառանում հրէաների դէմ, ենթարկելով հորիւր Հազարաւոր անմեղ հրէայ ընտանիքներէ կեանքը բռնութեան և նոցա կայքը՝ աւերման: Ակրտւում է մի գաղթականութիւն Առաքառանից զէպի Հիսիսիային Ամերիկայ Աֆրիկայ Արգինտինա Պաղեստին: Գաղթականների գրութիւնն շատ ծանր էր, նոքա խմբերով թափառում էին զանազան քաղաքներում առանց որևէ ապաստան և մի կտոր հաց ունենալու: Պարզ էր, որ զործր այգալէս թողնել չէր կարելի հարկաւոր էր որոշ ուղղութիւն տալ և կանոնաւորել գաղթականութեան զործր: այլապէս կարող էր շատ թշուառ հեռանքներ ունենալ հրէից ազգի համար: Այդ ժամանակ հրէայ ինտելիգենցիայի մէջ երկու հուսակցութիւն առաջացաւ, Աֆրիկական և Պարսկական: Առաջինները կամենում էին այդ գաղթականական շարժումը ուղղել բացառապէս զէպի Ամերիկայ հիմք ունենալով այն հանգամանքը, որ Միացեալ Նահանգները ներկայանում են իբրեւ աղատութեան և հաւատարմեան երկիր, որ աշխատանքը իւր ամեն տեսակներով կարող է աւելի բաւարար վարձատրութիւն ստանալ, հեռապէս և այնտեղ կարող են իրենց համար ապաստան որոնել նոքա որոնց հալածանքը իրաւունքների տահմանափակում և տնտեսական ծանր դրութիւնը ստիպել են վերցնել պանդխտութեան շուկն ու մախաղը և զէպի օտար երկիրներ ղրկել:

Պաղեստինականներն, ընդհակառակը, պընդում էին, որ երբ միանգամ գաղթականական շարժումը սկսուել է, պէտք է օգտուել այդ հանդամանքից և բնակեցնել նոցա իրենց պատմական հայրենիքում: Պաղեստինում որ միակ երկիրն է, ուր հրէաները կարող են ապաստան գտնել և իրենց բոլոր չղզալը իսկ զէպի Ամերիկա գաղթելը, այս կուսակցութեան կարծիքով, կարող է միմիայն ժամանակաւորապէս թեթեւացնել գաղթականների վիճակը, բայց չի կարող հաստատուն և խաղաղ ապաստան լինել և ապագայի համար:

Այսպիսով գաղթականական շարժման աւելի նպատակայարմար ուղղութիւն տալու մասին ծագած վէճը շուտով փոխուեցաւ մի

աւելի խոր դաշտաբախտական վէճի՝ հրէական ազգի ապագայ վիճակի նոցա հալածուելու պատճառների և ապագայում այդ հալածանքներից ապաստուելու միջոցների մասին: Առանց նապէս մեծ աղմուկ բարձրացրել այդ ժամանակ Ռեյլինում՝ դերմաներէն լեզուով լոյս տեսած մի բրոշյուր «Autelmauzipation» վերնագրով: Այդ բրոշյուրում, որ զբուռն է մեծ տաղանդով և երկտաւարչական աւելնով, հիշակար քննելով հրէից ազգի դարերի ընթացքում կրած այդչափ հալածանքների պատճառը գալիս է այն եղբակացութեան, որ ոչ թէ կրօնական աններողամտութիւնն ու արեւտեսական պայմաններն են պատճառ այդ հալածանքի, այլ ընդհանուր անհամակրութիւնը զէպի հրէաները իբրեւ օտար ցեղի ներկայացուցիչների և որպէս եկուորների, որոնք չունին սեփական հայրենիք: Աւտի և, հիշակար կարծիքով, դարաւոր հրէական խընդիրը իւր լուծումն կրտանայ այն ժամանակ միայն, երբ հրէաները իրենց համար մի սեփական անկիւն կուենան, որտեղ նոքա իրենց օտար չեն զգալ և կըկարողանան ապրել իսկական ազգային կեանքով:

Ինքն ըստինքեան հասկանալի է, որ խընդիրը այս կերպ դնելու և Պաղեստինը, ուր հրէութեան ապագայ վերածնութիւնը պիտի կատարուի, այն աւետեաց երկիրը համարելու մէջ մի քայլ էր մնում միայն:

Եւ իսկապէս, զէպի ո՞ր երկիրը կարող են ձգտել հրէաները աւելի քան զէպի Պաղեստինը՝ իրենց պատմութեան որորանը, որը իրենց յմախտական կեանքի ընթացքում շուրունակ ցնորքների և միսիթարութեան մըշտական առարկան է եղել: Այսպիսով հրէաների համար սեփական երկիր ձեռք բերելու մարքի հետ միանում է մի նոր միտք, թէ այդ երկիրը անպատճառ Պաղեստինը պիտի լինի և թէ այնտեղ բնակութիւն հաստատելը մի պատահական կամ ժամանակաւոր երեւոյթ չպիտի համարել, այլ որպէս սկիզբն հրէական խնդրի արմատական լուծման և հիմք ապագայ ազգային մեծ շինութեան: Այսպիսով առաջացաւ Պաղեստինականութիւնը, որը շուտով մեծ քանակութեամբ հեռանդներ ունեցաւ հրէայ ինտելիգենցիայի մէջ և իւր կողմը գրա-



ւեց համարեալ թէ ժամանակակից ամբողջ հրէական մամուլը:

Պաղեստինաւորական դադափարի տարածումը մի փոքր չափով անգամ չխանգարեց գաղթականական շարժման դէպի Ամերիկա և կարելի է, առանց սխալուած լինելու, ասել, որ սկսած առաջին հրէական հալածանքներից մինչև այժմ դէպի Ամերիկա գաղթել են 800 հազարից մինչև մէկ միլիոն հոգի: Ասկայն Պաղեստինաւորութիւնը զադափարական բնաւորութիւնից, որի պատճառով և դէպի Ամերիկա գաղթելը կատարուած է անկարգ կերպով և առանց բարոյական և նիւթական նպատակների մնացողների կողմից: Իսկ դէպի Պաղեստին գաղթականութիւնը, թէպէտ թուով աւելի քիչ, կրում էր միանգամայն դադափարական բնաւորութիւն: Առաջին գաղութը «Թիշու Լիցի» հիմնուեցաւ Պաղեստինում 1882 թ. դորան հետևեցին ուրիշները, շնայելով այն հանգամանքներին, որ գաղութներ հաստատելը անչափ աշխատանք և ուժ էր պահանջում մի կողմից միջոցների սղութեան պատճառով, իսկ միւս կողմից շնորհիւ թիւրքաց կառավարութեան յարուցած բազմաթիւ արգելքներին: Ասկայն գաղթականները պատմական հայրենիքում հրէական վերածնութեան գադափարով ոգևորուած հետացնում էին բոլոր խոչընդոտներն ու գժուարութիւնները, եռանդով նուիրուելով երկրագործութեան, որ սակայն սկզբներում շատ քիչ արդիւնք էր տալիս նոցա: Այս ագնիւ աշխատաւորների խնդրալի դրութիւնը ջերմ կարեկցութիւն շարժեց հրէայ ազգաբնակչութեան ինդելեգենտ դասակարգի մէջ, որ և օգնութեան հասաւ նոցա իւր կամաւոր լուծայով: Բացի դրանից այդ գաղութներով հետաքրքրուեցաւ Փարիզեան Ռոշալիցներից մէկը, որն և իւր հովանաւորութեան տակ առաւ նոցա: Այսպիսով այն, ինչ որ չյաջողուեցաւ Միացեալ Նահանգներում, Կանադայում, Արգենթինայում, Հարաւային Ամերիկայում, յաջողուեցաւ Պաղեստինում:

Սիոնականութիւնը ներկացնում է, ոչ միայն իրեն մի գործնական շարժում, այլ և իրեն մի որոշ վարդապետութիւն և յայտնի

աշխարհայեացք, որ իւր փիլիսոփայական հիմունքներն ունի: Կաշխատենք համառօտ կերպով առաջ բերել այդ հիմունքներն և Սիոնականութեան մասին եղած դեր և դէմ կարծիքները:

Ըստ Սիոնական վարդապետութեան դաւաւոր հրէական խնդրի գոյութեան պատճառը ոչ թէ կրօնական թշնամութիւնը կամ անտեսական կոխն է, այլ այն անբնական դրութիւնը, որ ունի հրէից ազգը, ահա արդէն 18 դար, ուրիշ ազգերի մէջ, իրեն անփական հայրենիք չունեցող բարձր ժողովուրդ, որ շնայելով այնչափ հալածանքների և նեղութիւնների՝ չէ ձուլուել ուրիշ ազգութիւնների հետ, այլ գոյութիւն ունի իրեն ազգային անձնաւորութիւն: Ըստ պատկերաւոր արտայայտութեան «Autlemanzipaiton» - ի հեղինակի, աշխարհը տեսնում է այդ ազգի մէջ մեծելի մի չարագուշակ ուրուական, որ շրջում է կենդանի մարդկանց մէջ:

Մի կտոր հողից զուրկ, ներքին միութիւն և կազմակերպութիւն չունեցող այս ժողովրդի խորհրդաւոր և տարօրինակ պատկերը, որ պատմութեան մէջ հայիւ թէ իւր նմանը ունենայ, անշուշտ պէտք է խորը արւաւորութիւն գործել ազգերի երեւակայութեան վերայ: Եւ եթէ երկկողմի զգացումը դէպի ուրուականը բնածին է մարդուն, ուրեմն և դէպի հրէութեան ուրուականը անեցած երկկողմ գարերի ընթացքում սերընդէ սերունդ անցնելով՝ պէտք է աւելի և աւելի ամրանար: Քանի որ մարդկային ազգի հրէաների մասին ունեցած նախապաշարումը հիմնուած է մարդարանական և սոցիալական խոր հիմունքներ ունեցող անխախտելի սկզբունքների վերայ, ուստի ի նկատի առնելով մարդկային յառաջողիմութեան դանդաղութիւնը, պէտք է հրաժարուել այդ նախապաշարմանը յաղթելու մտքից:

Հրէաների դէմ դիմում ևն ամենքը և ամենուրեք, թէ այնտեղ, ուր ժողովուրդը պահպանում է իւր խոր կրօնական զգացումը, թէ այն երկրում, ուր իշխում է կատարեալ կրօնական անտարբերութիւն, թէ այնտեղ, ուր քաղաքակրթութիւնը քիչ է, զարգացած և թէ այնտեղ, ուր տեղական բնակիչները



աւելի են զինուած անտեսական կռուի համար քան թէ հրէաները: Մարդիկ սովոր են յարգելու միմիայն նոցա՝ որոնք հաստատուն հոյի վերայ են կանդնած և կարօտ չեն ուրիշների ոգորմութեան և ներդրամութեան:

Աւստի և շարարաստիկ հրէական խնդրի յաջող լուծման միակ միջոցն է մի այնպիսի կենդանի ստեղծելու ուր Վերջապէս հրէաները կարողանային լինել այնպէս ինչպէս իրենց ամեն կարողանային ազգի սեփական ազգային կեանքով և զարգացնել իրենց նիւթական և հոգեկան ուժերը մարդկային գործունէութեան բոլոր ասպարէզներում և երկրագործական աշխատանքից սկսած մինչև ամենաբարձր հոգեկան կրթութիւնը: Վերածնունդով նոր հայրենիքում՝ հրէաները վերջապէս ձեռք կրբերեն ուրիշ ազգերի միջ այն համակրութիւնը, որից մինչ այդ զուրկ էին և այդպիսով ազգերի յարաբերութիւնը հիմնովին կրփոխուի նաև այն հրէաների նկատմամբ որոնք կը շարունակեն ապրել նոցա մէջ: Այդ ազգերը, վերջապէս կը տեսնեն որ հրէաներն ևս յարգանքի արժանի մարդիկ են, որոնք ոչ մի բանով իրենցից պակաս չեն հետեւապէս և իրենց հետ միասին հաւատար իրաւունք ունին անարգել գոյութիւն ունենալու և զարգանալու: Այս տեսակետով ազգերի անցեալ պատմութիւնը կարծես կոչուած է ծառայելու հրէաներին իրենց դաշնակից: Մենք տեսնում ենք թէ ինչպէս այն ազգերը, որոնք առաջ չէին համարձակուում երազելու իրենց վերածնութեան մասին, մի քանի տասնեակ տարիների ընթացքում յաւրութիւն առան մի նոր կեանքի համար:

Եթէ մի քանի մեր աչքի առաջ վերածնուած ժողովուրդների ազգային ձգտումները արդարացան, կարող է արգեօք հարց ծագել հրէաների վերածնութեան համար ունեցած իրաւունքի մասին: Հրէաները այդ ազգերից աւելի մասնակից են միջազգային քաղաքակրթական կեանքին, նոցանից աւելի ծառայութիւն են մատուցել մարդկութեանը: Նոքա ունին իրենց անցեալը պատմութիւնը, որոշ ծագումնային անթառամելի կենսունակութիւն, անդրդուելի հաւատ անօրինակ մարտիրոսութիւն, և բոլոր ազգերը ամենից աւելի

լի նոցա զէմ են մեղանշել: Այս բոլորը կատարելապէս բաւական են խոստովանելու համար որ նոքա միանգամայն ընդունակ և արժանի են իրենց հայրենիքն ունենալու:

Հրէաների վերածնութեան համար ամենայարմար երկիր իբրև նոր հայրենիք Պաղեստինն է, իրանց հին պատմական ծննդավայրը, ուր առաջին անգամ առաջ եկաւ և ծագեց հրէական քաղաքակրթութիւնը, որ և հիմք եղաւ համաշխարհային քաղաքակրթութեան: Հրէաների Պաղեստին վերադառնալու դադափարը նոր չէ, այլ ամբողջ 2000 տարի լծաքնուած է եղել ժողովրդի հոգու խորքերում: Այդ շարժումը կատարեալ ներդաշնակութիւն կազմելով ժողովրդի ամենանուիրական ձգտումների հետ, կարող է հաստատուն յոյս ունենալ ժողովրդի համակրութեան, հետեւապէս և կատարեալ ներքին յաջողութեան վրայ: Դորա հետ միասին նա կարող է յոյս ունենալ նաև արտաքին յաջողութեան և ուրիշ ազգերի նպաստուոր յարաբերութեան այդ շարժման նկատմամբ: Ննչ վերաբերում է Թուրքիային, հրէաների Պաղեստին դաղթելը միմիայն օգուտ կարող է բերել նորան, դարբի ընթացքում անապատ մնացած երկրում կեանք և քաղաքակրթութիւն մոցնելով, երկիրը հարստացնելով և պետական մուտքերը շատացնելով: Նոր երկիր դաղթելով հրէաները կը կազմեն մի կուլտուրական բնակչութիւն զբաղուած բացառապէս իրենց բարոյական և ֆիզիքական վերածնութեամբ նոր հայրենիքում: Այս ազգային վերածնութեան և յառաջադիմութեան համար գործ դրուելիք աշխատանքը այնքան ժամանակ կը պահանջէ և այն աստիճան կը կլանէ ժողովրդի բարոյական և նիւթական ուժերը, որ շատ տասնեակի գուցէ և հարիւրուոր տարիքների ընթացքում ժամանակ չի ունենալ քաղաքականութեամբ զբաղուելու և այդ կողմից Թուրքիան կարող է բոլորովին հանդիստ լինիլ:

Գ.

Միտական վարդապետութեան էութիւնը պարզելուց յետոյ, դառնանք զէպի այն հակառակ կարծիքները, որ այդ վարդապետ



տութիւնը առաջ բերաւ յատուկ դրականութեան մէջ ինչպէս Սուսանտանուն նոյնպէս և արտասահմանում գլխաւորապէս հրէաների իրենց կողմից:

Սիւնականութիւնը առաւելապէս զիմադրութեան հանդիպեց Վերմանտիան բարբիների և բուրժուազական ինտելեգենցիայի կողմից: Ուղղափառ բարբիները այդ շարժման մէջ նկատում էին Նախաինսամութեան գործերին միջամտելու մի ձգտում: Նոցա կարծիքով Աստուծոյ կողմից մարգարէների բերանով հրէաներին խոստացուած գերութիւնից աղատուելը պիտի կատարուի Տիրոջ ընտրելոյ—Մեօփայի զաւտեամբ: Աշխարհային միջոցներով այդ որոշեալ ժամանակի գաղութը արագացնելու համար եղած իւրաքանչիւր փորձ միջամտութիւն պիտի համարել Նախաինսամութեան ծրագրներին և որոշումներին որ միանգամայն դատապարտուում է հրէական կրօնով: Միւս կողմից նաև լուսաւորուած, բեֆորմատ բարբիներն ևս վեր են կենում սիւնականութեան դէմ, բայց արդէն բոլորովին այլ հիմքերով: Գոցա կարծիքով հրէայ ժողովուրդը չի կազմում ազգութիւն, այլ մի կրօնական համայնք, որին վիճակուած է մի բացառիկ պատմական առաքելութիւն, այն է՝ տարածել միաստուածութեան գաղափարը ուրիշ ազգերի մէջ: Այդ առաքելութիւնը մինչև այժմ դեռ չէ վերջացել: Միաստուածութեան գաղափարի հետ միասին հրէութիւնը կոչուած է նաև բարձրագոյն բարոյականութեան սկզբունքներ տարածելու, արգարութեան և յառաջագիմութեան պահանջներ դարձնելու ուրիշ ազգերի մէջ: Հրէական ժողովրդի ուրիշ ազգերի մէջ ցրուած լինելը նորան միջոց է ապրիս ծառայելու նախաինսամութիւնից որոշուած իւր կոչմանը: այս է նորա գոյութեան իրաւունքը (raison d'être) և հէնց այս տպագոյի համար է առաջ դալիս նա իրեւ ընտրեալ ժողովուրդ: Այդ ցրուած աղբը ի մի հաւաքելու և սեփական հոգի վերայ հաստատելու նպատակով եղած ամեն մի փորձ յանցանք պէտք է համարել պատմութեան որոշման և Նախաինսամութեան իմաստութեան դէմ, որ ընտրել է հրէական ժողովրդին պատմական որոշ նպատակի իրա-

գործման համար:

Սիւնականութեան դէմ եղած միւս առարկութիւնները կրում են պակաս միատեքական բնաւորութիւն և ունին աւելի գործնական հիմունքներ: Այդ առարկութիւններից մի քանիսը Սիւնականութեան հիմնական կէտերի դէմ են ուղղուած, իսկ միւսները վերաբերում են իրադրոժման միջոցներին: Առաջինների կարծիքով հրէական ինչորի լուծումը պէտք է որոնել ոչ թէ հեռու Արեւելքում այլ հէնց այն տեղերում որտեղ նոքա ապրում են այժմ: Մի կողմից նոքա պէտք է աշխատեն շարունակ կռուել իրենց իրաւանց հաւասարութեան համար, իսկ միւս կողմից եռանդուն մասնակցութիւն պիտի ցոյց տան իրենց քրիստոնեայ հոյրենակիցներին ընդհանուր կուլտուրական գործում: Սոցա կարծիքով սիւնականութիւնը նոյն իսկ վնասակար է հրէաների համար:

Վերջինների կարծիքով, եթէ նոյն իսկ ամբողջ հրէայ ժողովուրդը վճռէր տեղափոխուել Պաղեստին, չէր կարելի դառնել մի ուրիշ երկիր աւելի անպէտք այդ նպատակի համար, քան թէ Պաղեստինը: Հրէաները Պաղեստին գաղթելով շարունակ ստիպուած պիտի լինին պաշտպանուելու շրջապատող անսանձ ցեղերի վայրենի յարձակումներից և մոլորանդ թուրքերի գաղանդութիւններից, որոնք այնքան զօրեղ կերպով արտայայտուեցան բուլղարական աղէտների և հայկական կոտորածների ժամանակ: Խաղաղութիւն և հանգստութիւն խոստացող ցանկալի ապաստանի փոխարէն, նոքա նոր երկրում այնպիսի հաւածանքների կը հանդիպէին, որոնք մոռացնել կը տային իրենց հին տեղերում կրած բոլոր նեղութիւններն ու հաւածանքները: Մի կողմը թողնելով նոյն իսկ վերոյիշեալ հանգամանքները և ենթադրելով, որ Պաղեստինը ըստ ամենայնի յարմար և ցանկալի ապաստան կարող է լինել հրէաների համար, այդ գաղթականութեան իրականացումը այնուամենայնիւ ներկայացնում է իրեւ բացարձակապէս անիրադրոժի մի խնդիր: Ըստ տարածութեան և ըստ բնական պայմանների այդ երկիրը հազիւ թէ կարողանայ տեղաւորել ևս առաւել կերակրել մի միլիոնից աւելի ժողո-



վերջո՛ւ Մեզ յայտնի է, որ հրէաներն թիւը երկրագնդի վերայ 10 միլիոնից անցնում է, և թէ, յաջողութեամբ նոյն իսկ այնտեղ տեղափոխել մի միլիոն հրէայ, հասկա ուրեղ պիտի տեղաւորուէր մնացած ինն միլիոնը:

Սորա են այն գլխաւոր առարկութիւնները, որ անում են սիոնականութեան հակահատկորդները հրէութեան զանազան բանակներից: Հասկանալի է, ինքնըստինքեան, որ այդ առարկութիւնները չեն մնում առանց պատասխանի: Ազգափառ բարբիւնների առարկութեան՝ թէ Պաղեստին վերադառնալու համար պէտք է նախ սպասել Միասնայի գալստեան, սիոնականութեան պաշտպանները մասնացոյց են անում՝ այն հանգամանքը, որ հրէութեան նոյն իսկ հասարակ գաստկարգը արդէն այնքան զարգացել է, որ նա այլ ևս իւր փրկութիւնը հրաշքներից չէ սպասում: Արեւմտեան-Եւրոպական լուսաւորումը բարբիւնների առարկութեան՝ թէ հրէութեան կոչումն է տարածել ուրիշ ազգերի մէջ միաստուածութեան գաղափար և բարոյականութեան սկրքունքներ, սիոնականութեան պաշտպանները պատասխանում են թէ նոյն իսկ ենթադրենք, որ հրէաները իսկապէս կոչւում են եղել վերոյիշեալ առաքելութեան համար, այդ արդէն նոքա վաղուց կատարել են և միւս ազգերը այլ ևս այդ կարեքը չեն զգում: Քանի որ առանց հրէաների օգնութեան ևս նոքա կարող են առաջ տանել քաղաքակրթութեան և յառաջդիմութեան գործը: Աւստի շարունակ օտարի քաղաքակրթութեան մասին հոգալու փոխարէն, լաւ կը լինէր, որ վերջապէս, նոքա մտածէին ստեղծելու սեփական քաղաքակրթութիւն սեփական հողի վերայ: Իսկ սիոնական գաղափարի անխրադործելի համարողներին նորա պաշտպանները արտասխանում են, որ իրանք երբեք չեն մտածում բռնոր հրէաներին Պաղեստին գաղթեցնելու մասին, այլ բաւական է, որ այնտեղ կազմակերպուի մի նիւթական և հոգեւոր հրէական ազգային կենդրոն մի երկու միլիոն բնակչութեամբ, որ կարողանար բարձրացնել նոցա վարկը Եւրոպական ազգերի և նոյն իսկ հրէաների՝ իրենց առաջ: Պաղեստին կը դադրեն նոքա, որոնց համար իրենց հայրենիքը նեղ

է և որոնք նիւթական և հոգեկան պահանջ կրողան մի այդպիսի դադրականութեան, իսկ նոքա, որոնք այդ պահանջը չեն զգալ, կը շարունակեն ապրիլ այն երկրում, որտեղ ապրել են իրենց հայրերն ու պապերը:

## Դ.

Սիոնականութեան ծագման, հիմնական վարդապետութեան և նորա հակահատկորդների ու պաշտպանների առարկութիւններին ծանօթանալուց յետոյ, թող ներուրի մեզ վերջում մի քանի խօսք ասել այդ շարժման նրկատմամբ:

Կասկած չկայ, որ Սիոնականութեան հիմք ծառայող վարդապետութիւնը յոռետես ողով է լցուած, որ չի արդարանում իրականութեան մէջ: Այս վարդապետութիւնը ենթադրում է, թէ մարդկային ցեղի նախապաշարումը հրէաների դէմ հիմնուած է բնական և անխախտելի սկզբունքների վերայ և թէ դա ժառանգական է և որպէս հաղարաւոր տարիներ ընթացքում ցեղից ցեղ անցնող հիւանդութիւն անբուժելի է: Բայց մի թէ քիչ նախապաշարմունքներ են եղել, որոնցից մարդկութիւնը կարողացել է ազատուել: Եթէ հրէաների դէմ եղած նախապաշարումը մինչև այժմ պահպանուել է, սորանից չի հետևում, որ նա զոյգութիւն պիտի ունենայ յաւելեան: Միջնադարեան նախապաշարման նոյն դէմ հրէաների, երբ նոցա հազարներով այրում էին խարոյկների վերայ, և այժմանի մէջ, որ արտայայտւում է հակահրէական շարժումներով, ահազին տարբերութիւն կայ:

Սիոնականութեան սխալը այն է, որ նա բացառիկ պատճառներից առաջացած ժամանակաւոր երեւոյթները իրրեւ մշտական և անխախտելի է համարում: Այսպիսով, եթէ դժուար է համաձայնուել սիոնականութեան հիմունքների հետ, որ յոռետեսութեամբ է վերաբերւում մարդկային յառաջդիմութեան, յատկապէս մարդասիրական գաղափարների շրջանում, միւս կողմից չի կարելի չխոստովանել այն հոգեբանական երեւոյթի ճշմարտութիւնը, որ Սիոնականութիւնը յառաջ է բերում իրրեւ հրէաների դէմ եղած նախապա-



շարման հիմնական պատճառներից մինը, այն է՝ ուրիշ ազգերի մեջ յարգանքի բացակայութիւնը հրէաների նկատմամբ՝ իրրեւ մի լուսաւորական ազգի որ չունի իւր սեփական անկիւնը և ստիպուած է ապաստան գտնել ուրիշների մօտ։ Այս երեւոյթը, յիշուի շատ մեծ դեր է կատարում ուրիշ ազգերի արամադրութեան նկատմամբ՝ դէպի հրէաները և Սիոնակութիւնը և թէ նորա նպատակները իրագործուին, հաւանորէն մեծ ազդեցութիւն կունենայ այդ արամադրութեան փոխուելու նկատմամբ։ Վերադարձնելով հրէաներին այն յարգանքը որից մինչև այժմ՝ զրկուած էին ուրիշների աչքում։ Բայց ինքնըստինքիան հասկանալի է, որ այս հանգամանքը կարող է միայն երկրորդական հետեանք լինել Սիոնականութեան իրագործման, և ի հարկէ այդ չէ նորա իսկական նպատակը, թէև շատ հաւանական է, որ հէնց այդ հանգամանքը Սիոնականութեան առաջ գալուն նպաստող զըլխաւոր դրդիչներից մէկն եղած լինի։ Այսպէս թէ այնպէս սիոնականութիւնը արդէն ինքնըստինքիան մի խոշոր երեւոյթ է հրէութեան կեանքում, իրրեւ հրէական ազգի մեծամասնութեան անկախ ձգտումն ազգային վերածնութեան հայրենի հողի վերայ եւրոպական բարձր քաղաքակրթութեան սկզբունքներով։ Այն պետութիւնը, որի մասին Սիոնականները երազում են, պիտի լինի ազատութեան, արդարութեան և ոչ թէ շահագործող պետութիւն։ Արդէս յառաջագիմական շարժում որ ձգտում է զարգացնել ազգային ինքնաձանաչութեան ոգին հրէական ազգի մէջ, ընդլայնել նորա մտաւոր և բարոյական աշխարհահայեցքը, ազատութեան և ինքնուրոյնութեան ոգի մտցնել նորա մէջ, ուղղել նորա ձգտումները դէպի մի որոշ իդէալ։ Սիոնականութիւնը անկասկած միմիայն համակրանք և խրախոյս կարող է առաջացնել։ Առկած չկայ որ հրէաները իրենց այդ դարաւոր խնդրի լուծումը պիտի որոնեն ոչ թէ Արեւելքում այլ Արեւմուտքում որ նոցա կեանքը հաղարարութիւնը հիւստած է եւրոպական ազգերի կեանքի հետ և որի հողը նոյնքան իրաւունքով կարող են իրենցը համարել, որքան և միւս ազգերը։ Այդ խնդրի

լուծման միջոցն է ընդհանուր կուլտուրական աշխատանքը միւս ազգերի հետ միասին, ընդհանուր աշխատանքը՝ ընդհանուրի օգտին։ Սորանով չի ժխտում մի որոշ մաս հրէաների իրաւունքը ձգտելու ազգային վերածնութեան իրենց նախնիքների պատմական հողի վերայ։ Ազգային վերածնութեան ձգտումը իւրաքանչիւր ձևով ազգի բնական և անբռնարարելի իրաւունքն է կազմում և թէ նա ունի դրա համար բաւականաչափ կենսունակութիւն, բաւականաչափ, եթէ ոչ նիւթական գէթ մտաւոր և բարոյական միջոց և ոյժ։ Սիոնականութիւնը յաջողութիւն կունենայ թէ ոչ, այդ մասին դժուար է առաջուց հաստատան ասել։ Հաստատ է միայն այն, որ Սիոնականութիւնը ձգտում է իրագործել իւր նպատակները կուլտուրական միջոցներով։ Նախքան Պաղեստին գաղթելը և այնտեղ ազգային կեանքով ապրելը, մենք տեսք է աշխատենք մշակել մեզ, որպէս զի կարողանանք այդպիսի բարձր նպատակի արժանի լինել, և առում են Սիոնականները, և հէնց այդ ոգով էլ գործում են։ Նոքա հիմնում են ինքնակրթութեան ընկերութիւններ, օրինակելի գարոյներ, դրադարաններ, ընթերցարաններ, շարժութեայ դասախօսութիւններ, տարածում են հասարակ դասակարգի մէջ գիտութիւն և լուսաւորութիւն։ Հրատարակում են ժողովրդական հանրօգուտ գրքեր, բրոշյուրներ, փոստում են քարոզներ և ինչ և ինչ։ Այսպիսի մի կուլտուրական աշխատանք, ինքնըստինքիան վերին առաքմանի համակրելի է, որովհետև նա բարձրացնում է հրէայ հասարակ դասակարգի մտաւոր և բարոյական մակերեւոյթը, զարթոյնում է նորա մէջ ինքնաձանաչութեան և ինքնօգնութեան ոգին, մտցնում է նորա առօրեայ կեանքի մէջ հոգեկան հետաքրքրութիւն և բարձր կուլտուրական իդէալ։ Արդէն այդ նպատակներին հասնելու ձգտումը բաւական է, որ նոյն իսկ հրէութիւնից շատ հեռու մարդիկ ևս վերաբերուին Սիոնական շարժման գովասանքով և համակրութեամբ։

«Миръ Божій» 1901 I № 1—Թարգ. Մ. Վ.

